



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ԵՂԱԲ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎԻՆ**

Հայաստան Հիմնադրամի կեդրոնատեղիին մեջ, Կլենտեյլ, Չորեքշաբթի, Յունուար 31-ի երեկոյեան տեղի ունեցաւ Հայաստան Հիմնադրամի Վարչական Խորհուրդի հերթական նիստը: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, իբրեւ Վարչական Խորհուրդի անդամ, ներկայ եղաւ այս ժողովին: Առաջորդ Սրբազանին կ'ընկերանար Արժ. Տ. Կոմիտաս Քիւնյ. Թորոսեան: Ներկայ էր նաեւ Ազգ. Առաջնորդարանի ներկայացուցիչ եւ Հիմնադրամի անդամ տիար Բեգլար Փիլաւճեան:

## **PRELATE ATTENDS ARMENIA FUND JOINT CORPORATE AND EXECUTIVE BOARD MEETING**

On Wednesday, January 31<sup>st</sup>, the Corporate and Executive Board of Armenia Fund held their regular meeting at their offices in Glendale. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate and Corporate Board member, attended the meeting accompanied by Rev. Gomidas Torossian and Prelacy representative and Armenia Fund board Mr. Peklar Pilavjian.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՀԱՅ ԱԻՏՏ. Շ. ԵՒ Է. ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ 25-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ**

Կիրակի, Փետրուար 4-ի երեկոյեան ժամը 6-ին, Շարլոթ եւ Էլիզ Մերտինեան Հայ Աւետարանական վարժարանի 25-ամեակը պիտի տօնակատարուի Միշըն Հիլզի «Արարատ Տան» Տեօքմեճեան սրահին մեջ:

Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխացնէ իր օրինութիւններն ու յաջողութեան մաղթանքները:

## **PRELATE TO ATTEND THE 25<sup>th</sup> ANNIVERSARY CELEBRATION OF C. & E. MERDINIAN ARM. EVANGELICAL SCHOOL**

On the evening of Sunday, February 4<sup>th</sup>, Charlotte & Elise Merdinian Armenian Evangelical School will celebrate its 25<sup>th</sup> anniversary at the Deukmejian Hall of "Ararat Home" in Mission Hills. The Prelate will be in attendance to convey his blessings.

### **ՅՐԱՆԴ ՏԻՆՔԻ ԲԱՌԱՍՈՒՆՔԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ**

Երկուշաբթի, Փետրուար 4-ին, Պոլսահայ միութեան հրաւերով, գաղութիս միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներու ժողով մը տեղի պիտի ունենայ Էջմիածական Թեմի Առաջնորդարանին մէջ, ծրագրելու համար Պոլսոյ «Ակօս» թերթի խմբագիր Հրանդ Տինքի քառասունքի հոգեհանգիստը, որ նախատեսուած է Փետրուար 24ին, Սոնթեպելլոյի Նահատակաց Յուշարձանին առջեւ:

Իբրեւ Առաջնորդ Սրբազանին ներկայացուցիչ՝ ժողովին ներկայ պիտի ըլլայ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Վազգէն Բիւյ. Աթմաճեան:

### **PRELATE REPRESENTED AT THE MEETING OF THE ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS**

The Organization of Istanbul Armenians has invited representatives of community organizations to a meeting at the Western Diocese to plan a joint requiem service for "Agos" newspaper editor Hrant Dink. The meeting will take place on Monday, February 5<sup>th</sup>. The requiem is planned for February 24<sup>th</sup> at the Armenian Genocide Monument in Montebello.

Rev. Vazken Atmajian, pastor of St. Mary's Church of Glendale, will attend the meeting on behalf of the Prelate.

### **ՉԱԷՆ ԽԱՆՃԵԱՆԻ ԱՐԵՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒՂԵՒՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԻՆ**

Հինգշաբթի, 8 Փետրուարի երեկոյեան 7:30ին, Կլենտէյլի Հանրային գրադարանին մէջ, Համազգայինի նախաձեռնութեամբ կազմակերպուած է դասախօսական երեկոյ մը: Տիար Չաւեն Խանճեան պիտի դասախօսէ Արեւմտեան Հայաստան իր ուղեւորութեան մասին, ընկերակցութեամբ յարակից ժապաւենի մը:

Առաջնորդ Սրբազանն ու Ազգային Վարչութիւնը սիրայօժար ընդառաջած են իրենց ուղղուած հրաւերին:

## **MR. ZAVEN KHANJIAN TO LECTURE ON HIS PILGRIMAGE TO WESTERN ARMENIA**

On Thursday, February 8, Hamazkayin has organized a lecture, where Mr. Zaven Khanjian will speak on his pilgrimage to historic Western Armenia. A slide show of the trip will also be presented.

The event will take place at the Glendale Public Library and will begin at 7:30 p.m.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԿԸ ՀՈՎԱՆԱԻՈՐԷ «ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ»ՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՂԱՆԻ ՏՈՐՄԻԿ ԶԵՆՆԱՐԿԸ**

Ազգային Առաջնորդարանի հովանիին տակ գործող «Նոր Զուղայի Բարեկամներ» Յանձնախումբը, Բարեկենդանի տօնին առիթով, կազմակերպած է տարազահանդես մը, որ կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը: Զեռնարկը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 9 Փետրուարի երեկոյեան ժամը 7:30ին Կլենտէյլի Ամպրոզիա սրահին մէջ:

## **FRIENDS OF NEW JULFA PAREGENTAN FASHION SHOW UNDER THE AUSPICES OF THE PRELATE**

On the occasion of the upcoming feast of Paregentan, the Friends of New Julfa have organized a traditional fashion show, which will take place on Friday, February 9, at 7:30 p.m., at Ambrosia Hall in Glendale. The event is being held under the auspices of the Prelate.